գրաւելու համար, գաղթում են ամբողջ գիւղով և տիրում են հայերի կալուածներին, որ մինչեւ օրս կոչւում է Էրմանի մուլքլար (Հայի կալուածներ)։ Ծերունիներն ասացին, որ յիշեալ գիւղը հնումը յայտնի էր իրենց պապերին Փիրի-Քեանդ (Սուրբի-Գիւղ անունով, և երբ գաղթում են այդ գիւղը, այլ եւս այդ անունը չեն տալիս, որովհետեւ եղած Հայերն իրենց գիւղին Մօլլա Խալիլ էին ասում։

«Ինչի համար են Հայերը իրենց գիւղը Մօլլա Խալիլ կոչել, այդ մասին ոչինչ չասացին, ասելով, որ պատճառը իրենց յայտնի չէ։

«Մենք կարծում ենք, որ Մօլլա Խալիլ բառը դուրս է եկել Մօլլա-Խալիֆայ բառի աղաւաղումից։

«Հենց այս ըսպէիս թուրքերը մեր եպիսկոպոսներին խալիֆայ անուն են տալիս։ Թեմիս սրբազան Առաջնորդը, որ 1889 թուին՝ շրջել է այս տեղերը. տեղիս թուրքերին յայտնի է խալիֆայ անունով։ Հետեւապէս Հայերը հնումը տեսնելով, որ թուրքերը չեն կամենում այդ սրբավայրը Հայի սուրբ անուանել քանի որ իրենցն են ընդունելիս եղել[1]), բացատրել են նրանց սրբի ով լինելը, հասկացնելով, որ այդ գիւղը իրենց Մօլլա խալիֆայի նահատակութեան տեղն է, այդ պատճառով անուանել են գիւղը Մօլլա խալիֆայ, որ ժամանակի ընթացքում դարձել է Մօլլա Խալիֆ կամ Մօլլա Խալիլ։

«Ինչպէս ասացինք, Մօլլա Խալիլ գիւղից դուրս Վատնեան դաշտի արեւմտեան ծայրում, ձորակի ափին, գտնւում է սուրբ Գրիգորիսի մատուռը։ Հնումն ներկայ մատուռի տեղը եղել է քարակոյտ, որից յետոյ տեղական Հայերը շինել են տախտակեայ մատուռ։ Մատուռի մէջ տեղում առաջուան քարակոյտի տեղը շինում են մի փոքրիկ գմբէթաձեւ շինութիւն, որը և եղել է Հայերի աղօթատեղին։ Դիպուածով յանկարծ այրւում է այդ փայտեայ մատուռը, որ և վերջապէս շնորհիւ բարեպաշտ Տիկին Եղիսաբէթ Կաճկաճեանի հիմնաւորապէս վերանորոգվում է։

---

[1]) Հենց այժմ էլ շատ թուրքեր իրենցն են համարում այդ սուրբը, ուստի և հաւատում են, զոհաբերութիւն են անում։